

## Հարցաշար-2023

«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ  
8-րդ դասարան - 120 րոպե

N 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Որտե՞ղ էր ապրում Աբրահամը մինչև Աստծո պատվերով տեղափոխվելը. *(0,5 միավոր)*
  - 1) Քանան
  - 2) Բաբելոն
  - 3) Միջագետք
  - 4) Եգիպտոս
  
2. Ո՞ր խորհուրդն է կամավոր քրիստոնյայի համար. *(0,5 միավոր)*
  - 1) Ապաշխարություն
  - 2) Ձեռնադրություն
  - 3) Մկրտություն
  - 4) Հաղորդություն
  
3. Ի՞նչ արարողություն է կատարվում եկեղեցի կառուցելիս. *(0,5 միավոր)*
  - 1) հիմնօրհներ
  - 2) օծում
  - 3) ժամերգություն
  - 4) նավակատիք
  
4. Ի՞նչ են կոչվում եկեղեցու բեմի աջ և ձախ կողմերում գտնվող սենյակները. *(0,5 միավոր)*
  - 1) գավիթ
  - 2) խորան
  - 3) ատյան
  - 4) ավանդատուն
  
5. Ի՞նչ էր Աղվանից կաթողիկոսության առաջին գահակալի անունը. *(0,5 միավոր)*
  - 1) Մովսես
  - 2) Ներսես
  - 3) Աբաս
  - 4) Աբրահամ
  
6. Ո՞ւմ է 885 թ.Բաղդադի խալիֆն ուղարկում թագ, թագավորական զգեստներ և պարզներ. *(0,5 միավոր)*
  - 1) Աշոտ I
  - 2) Սմբատ I
  - 3) Աշոտ II
  - 4) Սմբատ II

7. Որտե՞ղ էր գտնվում Անիի Բագրատունյաց թագավորների տոհմական դամբարանը. *(0,5 միավոր)*

- 1) Ս. Խաչ եկեղեցի
- 2) Ս. Առաքելոց եկեղեցի
- 3) Չորովանք
- 4) Հոռոմոսի վանք

8. 631 թ. սեպտեմբերի քանիսի՞ն է ազատագրվում Տիրոջ խաչափայտը. *(0,5 միավոր)*

- 1) սեպտեմբերի 11
- 2) սեպտեմբերի 14
- 3) սեպտեմբերի 24
- 4) սեպտեմբերի 20

**N9-12**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

9. Եվ վերջապես՝ զոջումից, խոստովանությունից և \_\_\_\_\_ հետո եկեղեցում Հաղորդության խորհրդի միջոցով մարդը թողության է արժանանում: *(1 միավոր)*

10. Աստված Աբրահամին և \_\_\_\_\_ ծեր տարիքում զավակ է պարգևում, և նրա անունը դնում են Իսահակ: *(1 միավոր)*

11. Հայոց Եկեղեցին ընդունում է միայն առաջին երեք տիեզերական ժողովների որոշումներն ու կանոնները, քանի որ դրանցում ամբողջացան \_\_\_\_\_, այսինքն՝ քրիստոնեական դավանանքի հիմնական դրույթները: *(1 միավոր)*

12. 862 թ. Շիրակավանում գումարվում է ժողով՝ պատասխանելու \_\_\_\_\_ պատրիարքի նամակին: *(1 միավոր)*

**N 13-14**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից**

13. Իրադարձությունները համապատասխանեցնել կաթողիկոսների անուններին: *(1 միավոր)*

1. 927 թ. կաթողիկոսական աթոռը տեղափոխում է Աղթամար:

2. Աղվանից կաթողիկոսության հետ բնականոն հարաբերությունների վերականգնում:

3. Հայաստանի սահմաններից դուրս՝ Անտիոքում և Կիլիկիայի Տարսուն քաղաքում հայկական թեմերի հիմնում:

4. 1001 թ. Գագիկի և Տաշիր-Չորագետի թագավոր Դավիթ Բագրատունու (Անհողին) ռազմական բախումը կանխվում է կաթողիկոսի միջնորդությամբ, և Դավիթը հնազանդություն է հայտնում:

1	
2	
3	
4	

- ա. Պետրոս Ա. Գետադարձ
- բ. Սարգիս Ա. Սևանցի
- գ. Անանիա Ա. Մոկացի
- դ. Հովհաննես Ե. Դրասխանակերտցի
- ե. Խաչիկ Ա. Արշարունեցի

**14. Սրբերի անունները համապատասխանեցնել նրանց թաղված վայրերին:** *(1 միավոր)*

- |                      |               |
|----------------------|---------------|
| 1. Ս. Արիստակես      | ա. Աշտիշատ    |
| 2. Ս. Վրթանես        | բ. Վաղարշապատ |
| 3. Ս. Սահակ Ա. Պարթև | գ. Օշական     |
| 4. Ս. Մեսրոպ Մաշտոց  | դ. Թիլ        |
|                      | ե. Թորդան     |

1	
2	
3	
4	

**N 15-16**

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից**

**15. Իրադարձությունները դասավորել ըստ հաջորդականության:** *(1 միավոր)*

- ա. Վրաց եկեղեցու բաժանումն Արևելյան եկեղեցական ընտանիքից:
- բ. Դվինի կործանարար երկրաշարժը:
- գ. Մեծ Հայքի թագավորության պարսկական նահանգի վերածումը:
- դ. Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը:
- ե. Խաչիկ Ա. Արշարունեցու կաթողիկոսական ձեռնադրությունը:

1	
2	
3	
4	
5	

**16. Տոները դասավորել ըստ դրանց տոնման հաջորդականության:** *(1 միավոր)*

- ա. Պայծառակերպություն
- բ. Վարագա Ս. Խաչ
- գ. Ս. Ծնունդ
- դ. Համբարձում
- ե. Ս. Վարդանանց

1	
2	
3	
4	
5	

**Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից**

**17. Կարդալ և պատասխանել հարցերին:**

«Ահա այդպես էլ աներկյուղաբար մահացավ բանտում՝ մարտիրոսի ու նահատակի անուն ժառանգելով: Նրա աճյունը քրիստոնյաները տարան և հոգևոր երգերի ուղեկցությամբ թաղեցին Դանիել մարգարեի անունը կրող վկայարան-եկեղեցում»:

1) Ո՞ւմ գրչին են պատկանում այս տողերը:

(1 միավոր)

2) Ո՞ր սպարապետի մասին է խոսքը:

(1 միավոր)

**N 18-19**

**Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով**

**18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ:**

(2 x 1=2 միավոր)

- 1) Տոների նպատակը միայն հանդիսություններ կազմակերպելն է:
- 2) Պսակի խորհրդի միջոցով Հայոց եկեղեցին շեշտում է ընտանիքի ամրության և կայունության կարևորությունը:
- 3) Ջրօրհների արարողության ժամանակ ջրի մեջ իջեցվում է Ս. Ավետարանը:
- 4) Հովսեփն ու Մարիամը քսան օրական մանուկ Հիսուսին տանում են տաճար:
- 5) Ս. Մեսրոպ Մաշտոցը Ս. Սարգիս զորավարի աճյունից մի մասունք տեղափոխում է Հայաստան՝ Կարբի (Աշտարակի մոտ), և այստեղ կառուցում մեծ եկեղեցի:

--	--

**19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ:**

(2x 1=2 միավոր)

- 1) Հայոց և արևելյան մի խումբ եկեղեցիներ ընդունում են Քաղկեդոնի ժողովի որոշումները:
- 2) Կաթոլիկ եկեղեցիների հոգևոր և վարչական գերագույն առաջնորդը Հռոմի պապն է:
- 3) Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարում է Ազգային-եկեղեցական ժողովը:
- 4) Հայաստանի Հանրապետությունում գործում է Հայ Առաքելական Եկեղեցու 18 թեմ:
- 5) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը հիմնադրվել է 1461 թվականին:

--	--

**20. Շարադրանք:**

(2 միավոր)

Ի՞նչ է նշանակում Բարեկենդան (Նկարագրե՛ք):

Խոսե՛ք Մեծ պահքի մասին. ինչո՞ւ են պաս պահում: